

Ղազարու 1365 թուականի մաշտոցէն (Եպսկօրհնէք) եւ Մխիթար Սասնեցիէն (Սաս. ք): Բարեբախտաբար ասոր ձեւը կը տեսնենք հին հայ զրչագրաց խորաններու վերեւ, սկւոյն հետ միասին: Լամբրոնացւոյն աւետարանին մէջ (Ի Ս. Ղազար), գրուած 1193ին, զծուած է այն՝ լայնափոր ու ցած, կարճ եւ լայն պարանոցով, կոնաձեւ պատուանդանով եւ երկու զարդարուն կանթերով: Համակ ոսկի է՝ եկեղեցւոյ պատկանելուն համար, եւ կիտուածապատ: Պիժակ Սարգսի աւետարանին մէջ, 1331ին, կայ նոյնը. պարանոցն պւելի երկայն, բերանը վզէն լայնագոյն. ծորակ մ'ալ ունի, մի կանթ, եւ կոնաձեւ պատուանդանին վերեւ զնդածեւ է: Յայտնի է՝ թէ հասարակ կժերու կազմերն ալ ասոցմէ հետի չպիտի լինէին:

Փարչ: Փոքրիկ «նեղաբերան» կուժ, ուրով վաստակոց գիրքը գինին փորձել կուտայ (97, 98). եւ զոր միջին դարուն կը գործածէին ըստ ստոյն Գամասկացոյ՝ նաեւ Պատարագի գինին եկեղեցի տանելու. «Ֆարչ սակաւ գինեաւ» (Լոյս, 1906, 475): Անաւարգեցին ալ կ'ըսէ՝ թէ «Ֆարչ մի ջրոյ ի նշխարն խառնեն» (Անաւ.): Այս վկայութեանց մէջ արդէն շատ յայտնի է անօթիս ամենաչափաւոր ընդունակութիւնը: